

# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի հ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի/ 8 դասաժամ/, երգ-երաժշտության/ 12 դասաժամ/ և ֆիզկուլտուրայի /12 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԿ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- 1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- 5) ինքնակենսագրություն (Ձև 5),
- 6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- 8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- 9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համարել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 6-ից մինչև ապրիլի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժ. 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 21-ին՝ ժամը 12.00-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի հ. 1 հիմնական դպրոցում, հասցեն ք. Սիսիան, Կամոյի 3:

Տեղեկությունների համար զանգահարել 077-94-64-49 հեռախոսահամարով: